

Ձատիկը, Գրիստանէական աշխարհի այս մեծագոյն տօնը կուգայ անմահութեան այդ երգը հնչեցընելու եկեղեցիներու եւ եկեղեցին յորինող հոգիներու մէջ։

Այդ է պատճառը որ Փրկչին մահը յաղթութիւն մը եղաւ մահուան վրայ, եւ Անոր յարութիւնը նոր կեանք մը պարգեւեց մարտը եւ պարզ հաւատքի մարդկութեան։

«Փա՛ռք Յարութեան քո, Տէր»։

Ի՞նչ արժէք պիտի ունենային մարդոց աշխատանքը, անոնց մշակութիւնները այս երկրագնդին հոգեքը արգասաւորելու համար ներսէն եւ դուրսէն, եւ ի՞նչ արժէք պիտի ներկայացնէր անոնց մշակող-քը մտաւորական դաշտի անվսխման տարածութիւններուն մէջ, եթէ մարդոց հոգւոյն այս բոլոր արժէքները պիտի ծառայէին միայն մահուան յաղութիւնը։

Պէտք է խոստովանիլ որ մեր կարողութիւնները շատ չափաւոր են այս խորհրդաւոր խնդիրը լուծելու համար։ Բայց այս չափաւորութիւնը պատճառ մը չէ որ մարդիկ քնանային անտեսանելի իրողութիւններու աշխարհին խորհրդաւոր շաւիղներուն վերայ։ Այս նիւթը մասնաւորապէս մշակող գիտունի մը փորձանքութիւններէն պատկեր մը դրուած է Արեւի այս թիւին ուրիշ սիւնակներուն մէջ, որքեմութեան հարկ մըն է ունիկ դնել այս գիտունին ըսածներուն։

Իսկ հոս բաւական կը համարենք կոչ ընել Հայ ժողովուրդին, որ ամուր պահէ իր լոյս հաւատքը, հոգին անմահութեան մասին, եւ սիրէ այս կեանքը՝ մշակելու համար մարտը եւ զուարթ հոգի մը։ Վաղն զի՝ տխուր, վճատ, տկար, հիւսնող հոգի մը փորձանք է մարդուն։ Հոգեկան կեանքը անխառնող հազար տեսակ մոլութիւններ կան, որոնց զերի եղողները քան չեն կրնար հասկընալ թէ ի՞նչ է հոգին, ի՞նչ է անմահութիւնը, ի՞նչ է յարութիւնը։

Հայ ժողովուրդին բարոյական եւ անտեսական չափանիշները շատ վնասուեցան 1915էն ի վեր։

Եթէ Յարութիւնը իր կրօնական ներշնչութիւններուն հետ, ամէն տարի կը բերէ մեզի Յոյսի, Վերանորոգութեան, բնենք նաեւ Վերաշինութեան խորհուրդը, մեր կրօն կորուստներէն ու տեսած կործանութիւններէն ետքը, այս Զատիկները խկապէս պէտք է ըլլան հայութեան համար հոգը ազդակ մը, վերաշինելու իր կեանքի իր պատմական գոյութեան ամուր սկզբունքներուն, այսինքն իր կրօնական ճշմարտութիւններուն եւ տոհմային սրբութիւններուն վրայ։

Երբ այսպիսի գիտակցութիւն մը կը միանայ մեր հաւատքին, այն ատեն միայն կարելի է մտածել մեր Փրկչին Սուրբ Յարութեան խորհուրդին վրայ, եւ զուարթօրէն շնորհել փառարանութեան հին երգը։

«Փա՛ռք Յարութեան քո, Տէր»։

Փա՛ռք Յարութեան քո, ո՛վ Տէր, որ տառութիւններու մէջ թաղուած այս աշխարհին ըսիր թէ **Նա եմ Ճանապարհ եւ Ճշմարտութիւն** (Յովհ. Ժդ. 6)։

Փա՛ռք Յարութեան քո, ո՛վ Տէր, որ աւետեցիր

այս մեծած աշխարհին թէ **Նա իսկ եմ Յարութիւն եւ Կեանք** (Յովհ. ԺԱ. 25)։

«Ճանչնալ զայն եւ անոր Յարութեան զօրութիւնը, եւ անոր չարարանքներուն հաղորդ ըլլալ, եւ կերպարանակից ըլլալ անոր մահուան» (Փիլյո. Գ. 10)։— Փրկչին հետ այս ծանօթութիւնը, այս հաղորդակցութիւնը եւ այս նմանակցութիւնն է որ պիտի զուարթացնէ եւ պիտի խանդավառէ հոգիները՝ երգելու համար—

«Փա՛ռք Յարութեան քո, Տէր»։

Բ. Ե.

ԿԵՆԴԱՆԻ ՔԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

(Բ. ԿԻՐ. ՄԵՆՉ ՊԱՆՈՅ)

(Բ. Կորնթ. 2. 1—18)

Աւետարանչական ձիրքը անպէտ պերճանք, Առաքեալին բառերով՝ « բնդունայն շնորհք » կը զառնայ հեռակէտէ կրօնի պաշտօնէին մէջ, երբ չի կրնար այնպէս մը լարել անոր մէջ հոգիին զապանակը, որ հնար ըլլայ ի գէպ ժամանակի հնչեցնել վստահին անազանգը եւ մատնանշել փրկութեան ասպարեականութիւնը։

Պէտք է թողուլ որ բարձրագոյն նպատակներու համար միայն մարդուն տրուած այդ առաւելութիւնը մինչեւ հոգ իջնէ. այսինքն պէտք է հանդուրժիլ որ խօսքը սոսկ մեծած գեղեցկութիւն մը մնայ հոգեւոր մշակոյթի ասպարեկին մէջ։ Առտուածոյ հետ գործակցութեան իրենց ուխտը կատարած կ'ըլլան անոնք միայն, որ կրնան իրենց կուռմին սրբութիւնը զերծ պահել այդ կարգի անպտուղ պաշտօնավարութեան մը առաւելն։

Որպէսզի սակայն հնար ըլլայ ընել այդ բանը, պէտք է որ մարդ կարենայ խօսիլ իր համոզութեան անկեղծութեամբը, եւ ասկէ աւելի՝ իր աննշական երկնակին ազդեցութեամբը, այսինքն իր կեանքը նոյն իսկ ընկալի իր քարոզչութեան բեմը։

Ճշմարտութեան պաշտօնեան իր հակառակորդներն անգամ յարգանքի կը հարկադրէ անվերել, երբ անոնք իր վրայ կը տեսնեն անայլալ նկարագրի՝ անբիժ վարք՝ տիրական հեռացողութիւն իր Հասարակած սկզբունքներուն, եւ երկայնամիտ հեղուքիւն իր պաշտօնին ամենէն տաժանելի պայմաններուն մէջ. երբ կը հասկընան վերջապէս թէ աստուածային, այսինքն անկեղծօրէն ճշմարտախօս ոգի մըն է որ զօրացուցած է զինքը յարձակողական եւ պաշտպանողական (բնդ աշխէ եւ բնդ անկէ)՝ այնպիսի զէնքերով, որոնք արդարութեան հոգեւոր զէնքերն են միայն, անմահ՝ նիւթական զէնքերուն, որոնք յաճախ անիրաւ գտարներն եւ կը ծառայեն...

ՍԻՐՏԻՆ ԽԱԽԱՐԸ

(Գ. ԿԻՐ. ՄԵՆ. ՊԱՆՈՑ)

(Եփես. Գ. 17 — Ե. 14)

Այսպիսի հոգիով լեցուած և այդպիսի հրայրքներով ըզմակերպուող գործիչը, ինչ որ ալ լինի այլոց իր մասին ցոյց տուած վերաբերմունքը, անխրդով քաջութեամբ կը դիմէ զէպի իր պարտականութեանց նպատակը։ Անուշագիր՝ իր շուրջը գոռացող տարփողանքի ծափերուն և անարգութեան ազմուկին, մինչդեռ սմանք կ'այգանեն զինքը իրբն մոլորեցուցիչ մը և արհամարհուած անձանք մը, մինչ ուրիշներ կը պանծացնեն իր անձը որպէս ճշմարտութեան առաջնալ և հանրահռչակուած զէմք, ինքը, իրարու հակադիր զգացումներու այդ միտքին մէջէն, առանց երբեք խտորեւելու, կը շարունակէ միայն իր համբան, ամէնէն մահացուցիչ կոտորածներուն մէջ իսկ անմահութեամբ լեցնելով միշտ իր յայտը, և ամէնէն վատեցուցիչ զառնութիւններուն մէջ ալ պահելով շարունակ իր հոգեկան գոռաթիւթիւնը։ Եւ այս ամէնը՝ շնորհիւ այն գիտակցութեան թէ ուրիշ և գերազայն կարգի մը պատկանող հարստութիւններ կան իր մէջը, որոնք ոչ միայն իրեն, այլ աշխարհներուն պիտի բաւեն։

Ու գործէն ինքնին կը ծնի այն ասան խօսքը, ինչպէս հրաշունչ հալցին ծոցէն վազող օսկի հասանքը, կենդանի՝ և գործօն։

Բառեր չէ որ պիտի լսես դուն հիմակ անոր մէջ, այլ ապրող գործութիւններու մտերիմ մըրմունքը, որ կաթողին սիրոյ խանդաղատանքով կ'ըսէ քեզի. « Լայնցու՛ր սիրող ինծի համար, տե՛ղ տուր հոն ինծի »։ Այլ ևս մէ՛ջը է իր ոգին, ու մէ՛ջը տաղաւարուած հոգիի՞ց՝ սրտից խորանէն է որ կը խօսի ան քեզի հայրական զգացումի քաղցրութեամբ։ Ու առաջին խրատը կամ պատուէրը, զոր իր տէրը կ'աւանդէ քեզի, մարգարտէ շարք մըն է գոհար սկզբունքներու։ — Խաչին սայլը պէտք չէ բարոյապէս տարասեռ ոյժերու լծել։ — Արդարութիւնը եւ անօրէնութիւնը չեն կրնար մէկ գիծի վրայ դասուիլ։ — Աններկի է լոյսը խաւարով, այսինքն ճշմարտութիւնը ստութեամբ համակշռել։ — Եւ մի է տիգմի վրայ գրել օճալին անուրը։ — Հաւատքը չի պտղաբերիր քարացած սիրտերու մէջ։ — Կղծութեան տունները չեն կրնար օթեան ըլլալ Սուրբ Հոգւոյն...։

Մեհեանը, զոր աշխարհ իր բազմակերպ ներգործութիւններովը կանգնած էր մէջը, հետզհետէ կ'իջնէ՝ կը կործանի ահա իր խախտած հիմքներուն վրայ, երևան բերելու համար բուն Սրբաբանը, խիղճը, տաճար՝ որուն մէջ միայն կը բնակի Ամենակալը։

— Արթնցնել խիղճը, լուսաւորելով զայն Աստուծոյ զգացումովը։ Ա՛յս է կենդանի քարոզութեան նպատակը։ Եւ ասոր կրնայ հասնիլ կեանքէն ծնած կենդանի խօսքը միայն։



Երբ սիրտը կը դատարկուի Աստուծոյ կեանքէն, այսինքն յաւիտեականութեան և երանութեան խորհուրդը սնուցանող զգացումէն, զայն շուտով կը լեցնեն ունայնամտութիւնը՝ տգիտութիւնը՝ անյուստութիւնը և իմացական կուրտութիւնը, որոնք բարքերու հեթանոսացման ամէնէն տխուր ախտաշաններն են։ Հոգեկան անկուծի այս վիճակին անխրդ վտանանքը կը լինի միշտ անպարկեշտութիւնը և ապահովութիւնը, վասնզի բարոյականի խանգարումը ծնունդն է ընդհանրապէս կրօնական մոլորանքի։

Ճշմարիտ բրիտանոնեան պէտք չէ քնա իր անձին թոյլատրէ ինքնապաշտութեան ամէնէն աղետաւոր այդ կերպը, որ մասն իսկ է հոգիին։ Ասոր համար, անիկա պէտք է Բրիտանոն ըզխող վերանորոգիչ գործութեան լոյսով (— ճշմարտութիւն Յիսուսի —) պայծառացնէ իր էութիւնը, պէտք է հոգիին ազդեցութեամբ գործող միտքի քննութիւններով վերստուգումս կնխարկէ իր խիղճը, օրէ՛ջ չնչէ իր անձին վրայէն նախկին մեղապարտ կենցաղի ամբողջ հետքերը, և բոլորովին իւրացնէ Աստուծոյ պատկերին համեմատ նորաստեղծուած տիպարին սրբութիւնն ու արդարութիւնը։

Բայց ասոնք իր այն պարտականութիւններն են, որոնք կը ծառայեն իր անձին շինութեան համար միայն։ Անիկա ունի զեռ ուրիշներ, որոնք այլոց հետ իր մշակելիք յարաբերութեանց պայմանները կը կազմեն, և ևս։ Ճշմարտախօսութիւնը, հեղութիւնը, հաւատարմութիւնը և լեզուի մաքրութիւնը։

Այն գաղափարը թէ ամէնքս միութեան մը ժառերն ենք, իրբն Բրիտանոն մարմնոյն, այսինքն եկեղեցւոյ անդամները, զորս միեւնոյն հոգին կը վարէ, պէտք է զգուշացնէ մեզ գիբար խաբելու՝ միմեանց քաշակու թիւութիւնէն։ — Բարկութիւնը ամէնէն մարդկային տկարութիւններէն մին է, զոր գրեթէ անկարելի պիտի ըլլար արգիլել։ Բայց անհնար չէ զէթ կարենլ զայն եւ չթողուլ որ ծանր հետեանքներու յանգի։ Պէտք է թոյլ տալ որպէսզի ժամանակը, որ մեծագոյն վարպետն է, կարենայ իր բաժնի ներգործութեամբ շուտով խաղաղեցնել փոթորկած զգացումները։ — Գողութիւնը, որ ստանալու քնազգին զեղծեալ ձեւն է, ամենազգահիլ մոլութիւն մըն է. իր բարոյականը անոր զէմ պատապարելու համար, բրիտանոնեան պարտի իր մէջ մըշակել՝ տալու քնազգը մաշտաւանդ, այս կերպով միայն կարելի կ'ըլլայ խախտել նոր փորձութիւնները և անկումները, և հասնելալ թէ երջանկութիւնը առնելէն աւելի տալէն կուգայ։ — Ինչպէս ֆիդիքականին մէջ կեղտոտ լեզուն աւրուած ստամբքս կը նշանակէ, նոյնպէս բարոյականին մէջ անմաքուր խօսքերը յայտարար

